ԼԻԼԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԻՆ ՀՌՈՄ. ԱՆՑՈՒՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՊՐԻՆՑԻՊԱՏԻ
(առաջին եռապետության փորձից)

Հին Հռոմի Ք. ա. 1-ին դարի պատմությունը շարունակում է մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Դրանում առկա են համակեցական կյանքի քայքայման և բանական ինքնարարման այնպիսի արքետիպեր, որոնք ունեն համապատմական արժեք: Մեռնում էր ավանդական Հանրապետությունը՝ հարդյունս լուծում չստացած բազում ներքին և արտաքին հակասությունների: Ժամանակակիցներն այս իրողությունն ընկալում էին իբրև խորագույն ողբերգություն: Ըստ նրանց, փշուր-փշուր էր լինում համակեցական հանուրը (res publica dilacerata)՝ տեղի տալով հատվածապաշտության և եսամոլության բոլոր ոլորտներում՝ իշխանական կառույց, կրոն, բարոյականություն, կենցաղ[1]:

Անցնելով փոխադարձ թշնամանքի ու քաղաքացիական պատերազմի ավելի քան հարյուրամյա շրջափուլ (Ք. ա. 133-31 թթ.)՝ Հռոմն, այնուամենայնիվ, դրսևորեց կամք և բանական ներուժ՝ ստեղծելու հասարակական համակեցության նոր ձև, որի նպատակն էր համադրել հանրապետությունն ու մենիշխանությունը: Հընթացս ժամանակի կյանքի կոչվեց «հանրապետական միապետությունը» կամ, ինչպես իրենք էին կոչում, պրինցիպատը[2]:

Դասական Հունաստանը ծանոթ էր այս ձևի միայն սաղմնային վիճակներին[3]: Հռոմում այն ստացավ նախ իմաստասիրական և քաղաքագիտական համակողմանի հիմնավորում (Կիկերոն, Մալուստիոս), իսկ ապա Օգոստոսի ջանքերով մար--մնավորվեց պատմական կոնկրետ ժամանակի ու տարածության ծիրում (Ք. ա. 27 թ.):

Հոդվածը խնդիր ունի լուսաբանելու հանրապետական կառույցից պրինցիպատին անցման մի կոնկրետ քաղաքական մեխանիզմ: Խոսքը եռապետության մասին է: Հայտնի է, որ Հռոմի քայքայման առավել ակներև դրսևորումներից մեկը՝ զորեղ անհատականությունների ի հայտ գալն ու «իրենց՝

---

[1] Sallustius, Jug., XII, 5; Cf. R. Syme, Sallust. Berkley – London, 1974, pp. 121-122; С. Л. Утченко, Политические учения древнего Рима III – I вв. до н.э., М., 1977, с. 229–230

[2] R.Syme, The Roman Revolution, Oxford, 1963, p. 8

[3] T. Burn, Aristotle, - in Political Thinkers. From Socrates to the Present, Oxford, 2003, pp. 81-83

հանրապետությունից դուրս դնելու» ձգտումն էր: Նպատակին հետամուտ՝ վերջիններս օգտագործում էին հին հանրապետական հաստատություններն ու արժեքները՝ դրանց հաղորդելով նոր բովանդակություն:

Ք. ա. 60 թ. Հռոմի երեք հեղինակավոր ու ազդեցիկ անձինք՝ Գնեոս Պոմպեոսը, Գայոս Հուլիոս Կեսարը և Մարկոս Կրասոսը, կնքեցին մի համաձայնագիր, ինչպես իրենք էին հայտարարում՝ Հանրապետության նկատմամբ «հոգածություն իրագործելու» և «հին բարքերը վերականգնելու» համար[4]: Բոլորը հասկանում էին, որ համաձայնությունը ժամանակավոր է, և մասնակիցներից յուրաքանչյուրը վաղ թե ուշ ձգտելու է մենիշխանության, և ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, չէին սխալվում: Ք. ա. 53 թ. Կրասոսը զոհվեց Արևելքում: Հետագա պայքարն ընթացավ Կեսարի և Պոմպեոսի միջև, որը վերածեց քաղաքացիական պատերազմի (Ք. ա. 49-46 թթ.): Պոմպեոսը պարտվեց և ընկավ, Կեսարը հռչակվեց ցկյանս դիկտատոր (dictator aeternus): Հռոմում, սակայն, հույժ զորեղ էին հանրապետական ավանդույթները, մինչդեռ Կեսարը գործում էր առավելաբար ուժի դիրքերից (imperium), և զոհ գնաց դավադրության (Ք. ա. 44 թ.)[5]:

Երկրորդ եռապետությունը կազմավորվեց Ք. ա. 43թ.՝ Գայոս Օկտավիանոսի, Մարկոս Անտոնիոսի և Մարկոս Լեպիդոսի մասնակցությամբ: Ի տարբերություն առաջինի՝ վերջինս իր իրավասությունները ստացել էր «սենատից և հռոմեական ժողովրդից»՝ Հանրապետությունը վերականգնելու նպատակով (res publica restituenda)[6]: Եվ կրկին եռապետության մասնակիցներից յուրաքանչյուրն այն դիտարկում էր իբրև միջոց սեփական մենիշխանության հաստատման ճանապարհին: Կրկին ծայր առավ քաղաքացիական պատերազմ, որը տևեց շուրջ տասը տարի (Ք. ա. 44-31 թթ.): Ավարտվեց Օկտավիանոսի հաղթանակով: Նրա անձն ու անունը պսակվեց քարիզմատիկ ճաճանչով: «Հանրապետական միապետություն» հաստատելու նպատակով՝ Օկտավիանոսն օգտվում էր առավելաբար քաղաքացիական, կրոնական, մշակութային հարացույցներից: Ուժային-քաղաքական հարկադրանքը մղվեց հետին պլան: Պրինցիպատը Հռոմին տվեց ևս երեք հարյուրամյա կյանք: Ժամանակակիցները և սերունդները Օկտավիանոսին կնքեցին «Հռոմի նոր հիմնադիր» և «Հայրենիքի հայր» պատվանուններով: Նրա կամքի ու բանակա-

---

[4] Е.М. Штаерман, От гражданина к подданному,— в кн. Культура древнего Рима, т.1, М., 1985, с. 27—29

[5] R.Syme, The Roman Revolution, pp.224-225; H. Schullard, From the Gracchi to Nero, London, 1964, pp9-11

[6] С.Л. Утченко, Идейно—политическая борьба в Риме накануне падения Республики, М., 1952, с. 53—55

նության արդյունք էր համարվում հռոմեական համընդգրկուն կարգն ու խաղաղությունը (pax Romana)[7]:

Արդ, փորձենք այս տեղաշարժերին լրացուցիչ լույս հաղորդել հռոմեական հասարակական կենցաղի համար կարևոր մեկ եզրի «դաշինքի» (societas)[8] մեկնաբանությամբ :

Առաջին և երկրորդ եռապետությունների ժամանակ մենք գործ ունենք միանգամայն տարբեր ընկալումների հետ: Առաջինի պարագայում, անտարակույս, գերակայում էր դաշինքի ընկալումը: Եվ հարցն այդպես էլ ներկայացվում է սկզբնաղբյուրների մեծ մասում: Օկտավիանոսի դարաշրջանի խոշոր պատմագիր Վելեոս Պատերկուլոսը վկայում է. «Այդ ժամանակ նրա (Կեսարի), Գն. Պոմպեոսի և Կրասոսի միջև կայացավ դաշինք հանուն նրանց հզորության (potentiae societas)»[9]: «Դաշինք» եզրն առկա է նաև Ք. հ. 1-2-րդ դդ. կենսագիր Սվետոնիոսի շարադրանքում. «Նա (Կեսարը) Պոմպեոսին հաշտեցրեց Կրասոսի հետ . . .. և ինքն էլ դաշինքի մեջ մտավ նրանց երկուսի հետ՝ պայմանավորվելով թույլ չտալ պետական որևէ ձեռնարկ, որը հակասեր երեքից որևէ մեկի շահերին»[10]: Իսկ Պլուտարքոսը և Դիոն Կասիոսը (1-3-րդ դդ.) երեքի դաշինքը ներկայացնում են եզրի գերադրական աստիճանով՝ «բարեկամությամբ» (հուն. filiva, որին համապատասխանում է լատ. amicitia-ն)[11]:

Ասվածի դիտանկյունից, երբ քննարկում ենք նույն դարաշրջանի պատմագիր Ապիանոսի վկայությունը, կասկած չի մնում, որ նա նույնպես նկատի ուներ «դաշինքը»: Բնութագրելով երեքի հարաբերությունները՝ նա արձանագրում է. «Այս երեք անձինք՝ հասնելով ամենակարողության, իրենց զորությունն օգտագործեցին հանուն փոխադարձ օգուտի»[12]:

Բնութագրումներում առկա բացասական երանգը խորացված է ժամանակի առումով առաջին եռապետությանն ավելի մոտ կանգնած երկու ականավոր պատմագիրների՝ Մ. Տ. Վարոնի և Տիտուս Լիվիոսի (Ք. ա. 1-ին դ.) երկերում: Նրանք, անտարակույս, արտահայտում են սենատական ընդդիմության դիտանկյունը: Վերջինս, ինչպես հայտնի է, ձգտում էր պահպանել Հանրապե-

---

[7] Augustus,- in The Oxford Classical Ditionary. Oxford, 1992, p. 150

[8] Հռոմեական իրականության մեջ այս եզրի բովանդակության և գործառույթի մասին մանրամասն տես՝ G.Manigk, Societas.- in Pauly-Wissova Realencyclopädie der classischen Altertumwissenschaft, 1927, IIIA$_1$, S. 772-781, E. Badian, Foreign Clientelae, Oxford, 1958, pp. 21-23; Մ. Բարտոշեկ, Римское право: Понятия, термины, определения, М., 1989, с. 227

[9] Vel. Pat., Historia Romae. II, XXVI, I

[10] Suet., Div. Jul., XIX, 2

[11] Plut., Caes. XII; Pomp., XLVII; Crass., XIV; Dio Cass., XXXVII, 55-58

[12] App., Bel. Civ., II, 19

տությունն առանց էական փոփոխությունների՝ սենատի բացարձակ գերակայությամբ: Իր չպահպանված երկասիրության մեջ Վարոնը եռապետությունն անվանում էր «եռագլուխ»՝ (հավանաբար, հրեշ)[13]: Մինչդեռ Լիվիոսն ավելի հստակ է. նա եռապետությունն անվանում է «երեք առանձին անձանց (պրինցեպսների) դավադրություն» (conjuratio)՝ Հանրապետության դեմ[14]:

Նշենք, որ այս բանաձևումն ըստ էության չի հակասում նախորդներին. համաձայն հռոմեական ընկալումների՝ «դավադրությունը» «դաշինքի» մասնակի ձևերից էր:

Ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Առաջին եռապետության գործառույթը և պատմությունը մեկնաբանելիս անպայմանորեն պետք է մեկնարկել «դաշինք» ավանդական հասկացությունից: Հարկ է նկատի ունենալ վերջինիս թե՛ ընդհանրական, թե՛ եզակիան հատկորոշիչները:

Այսպես. դաշինքը համակեցական կյանքի կազմակերպման տիպիկ հռոմեական ձև էր, որ ծագում էր տոհմական կենցաղից հայտնի «տղամարդկանց միություններից»[15]: Հռոմեական հանրապետության ծիրում վերջինս շատ որոշակի այլափոխության էր ենթարկվել՝ պահպանելով էական մի շարք գծեր:

Դաշինքի առաջնահերթ նպատակն էր՝ կարգաբերել իր անդամների՝ միևնույն նպատակին միտված հարաբերությունները: Այդ կարգաբերումը կատարվում էր առավելաբար սովորութային իրավունքի նորմերով: Եվ իրավացի պետք է նկատել այն հետազոտողների պնդումը, թե դաշինքը բառիս բուն իմաստով իրավական անձ չէր և պաշտոնական բնույթ չէր կրում: Ըստ Ռ. Սայմի՝ դաշնային հարաբերությունները կազմում էին (շատ հաճախ անտեսանելի) այն հետնախորքը, որի պաստառին ծավալվում էին հռոմեական պատմության խոշորագույն իրադարձությունները[16]:

Իրենց հռոմեացիների ընկալմամբ՝ դաշնության հիմքում դրված էին բարեկամական (ամիկալ) հարաբերությունները[17]: Նրա ծիրում ընդգրկված անձինք կարող էին լինել ինչպես ազգականներ (ընտանիք, տոհմ), այնպես էլ «մեկուսի քաղաքացիներ»: Կարևոր էր ընդհանուր շահի գիտակցումը և ձևակերպումն իբրև միասնական գործողութենական նպատակ: Այդ հիմամբ էլ ձևակերպվում էին դաշնության անդամների փոխադարձ համաձայնությունը,

---

[13] Varr. Ap. App. Bel. Civ., II,9
[14] Liv., Per., 103
[15] Т. Моммзен, История Рима, т.1, М., 1936, с. 60—61
[16] R.Syme, The Roman Revolution, p.12
[17] H. Neuman, Amicitia,- in Pauly-Wissova Realecyclopädie der classischen Alertumissenschaft, I_2, S.1832-1833

նրանց իրավունքներն ու պարտականությունները: Կարևոր էր նաև դաշնության բարոյական (իրական կամ քարոզչական) գունավորումը:

Դաշնությունները հռոմեական միջավայրում աչքի էին ընկնում մեծ բազմազանությամբ: Նրանց նպատակը կարող էր լինել հոգևոր կամ գործառնական՝ սկսած աստվածների պաշտամունքից, բազում ծեսերից մինչև առևտրական կոնկրետ գործարքներ: Դաշնությունները կարող էին միտված լինել առ բարիքը կամ չարքը, ուստի նրանց գործունեության արդյունքներն արժեքաբանական տատանումի մեծ հետագիծ ունեին՝ արիության ու փառքի գործերից (res gestae) մինչ չարագործություն (scelera): Բայց շատ հաճախ դրանց սահմանները հարաբերական էին՝ կախված գնահատողի պատկերացումներից ու չափանիշներից:

Գնահատման մեկ այլ սանդղակ պայմանավորում էր դաշնության ընդգրկման սահմանները: Այս առումով տարբերակվում էին հետևյալ երեք տիպերը. ա) դաշնություն, որ վերահսկում էր իր անդամների գործունեության բոլոր ոլորտները և համապատասխանաբար՝ նրանց ներկա և ապագա եկամուտը (societas omnium bonorum), բ) դաշնություն, որ ենթադրում էր իր անդամների փոխադարձ օգուտին միտված գործողությունների ամբողջական շարք՝ կոնկրետ իրադրության և ժամանակի ծիրում (societas quaesta), գ) եզակի գործառույթի և նպատակի միտված դաշնություն (societas unius rei)[18]:

Հիշարժան է նաև մեկ հանգամանք: Իբրև փոխհամաձայնությամբ շաղախված միություն (societas consensualis)՝ դաշնությունը կարգավորում էր նաև իր սեփական տևողությունը: Որպես կանոն, նրա ելակետային համաձայնությունը համընդգրկուն բնույթ չէր կրում և ժամանակ առ ժամանակ կարիք ուներ թարմացման: Նման պարագայում նախ և առաջ ենթադրվում էր «գործառույթի դադարեցում ընդհանուր համաձայնությամբ» (dissensus mutuus): Դրանից հետո միայն հնարավոր էր դաշնության գործունեության նորացում՝ նախկին կամ նոր հիմունքներով[19]:

Նախատեսվում էր մեկ այլ իրավիճակ ևս. անդամներից որևէ մեկի մահ կամ հրաժարում գործունեությունից (renuntio): Այս դեպքում ևս հնարավոր էր դաշնության ինքնալուծարում: Սակայն առավել տարածված ու ընդունելի էր մեկ այլ ելք: Դաշնությունը շարունակում էր գործառել, հաջողության դեպքում հրաժարվողն ակնկալվող եկամտից մասնաբաժին չէր ստանում, իսկ անհաջողության դեպքում պարտավոր էր կիսել կրած վնասը:

---

[18] G. Manigk, op. cit., S. 779; М. Бартошек, Указ. соч., с. 298
[19] E. Badian, op. cit., p.87

Նման ըմբռնումների դիտանկյունից բացահայտվում են Առաջին եռապետության մի շարք էական առանձնահատկություններ: Նախևառաջ այս դաշնության անվանումն, ըստ էության, չի արտահայտում նրա խորքային բովանդակությունը: Այս ձևով նրան որակել են նոր դարաշրջանի հետազոտողները՝ նույնության նշան դնելով դրա և երկրորդ եռապետության միջև: Մինչդեռ Առաջին եռապետությունը ոչ պաշտոնական մասնակի դաշնություն էր, որի զորությունն ու հեղինակությունը խարսխված էր բացառապես մասնակիցների անհատական որակների և հասարակական ազդեցության վրա[20]:

Պոմպեոսի, Կրասոսի և Կեսարի Ք.ա. 60 թ. համաձայնությունն, ամենայն հավանականությամբ, «սահմանափակ դաշնության» տարատեսակ էր: Նրանք միավորվում էին իրենց (և իրենց թիկունքին կանգնած ընկերային խավերի) համար կարևոր մի խումբ խնդիրների լուծման համար, որոնք սենատական վերնախավի բացարձակ գերակայության պայմաններում ցանկալի լուծում ստանալ չէին կարող: Հանրահայտ է, որ Պոմպեոսի նպատակն էր՝ սենատի և աշխարհաժողովի (կոմիտիա) օրինադրությամբ հաստատել Արևելքում կնքած իր բոլոր պայմանագրերը և հողաբաժնով ապահովել իր «մեծ բանակի» վետերաններին, Կրասոսը ձգտում էր բարենպաստ պայմաններ ապահովել հռոմեական գործարարների (հեծյալներ) համար թե՛ Իտալիայում, թե՛ նահանգներում, իսկ Կեսարի հոգածությունը տարածվում էր հռոմեական հասարակ զանգվածի վրա (պլեբս)՝ նպաստներ, աշխատատեղեր, արտոնություններ, հաց, կրկեսային ներկայացումներ: Այս ընդհանուր նպատակներից դուրս դաշնակիցներից յուրաքանչյուրը գործում էր ըստ իր հայեցողության և պատասխանատվության:

Ընդհանուր ձեռնարկի հաջողությունը մասնակիցներին խոստանում էր արտակարգ (թեպետ՝ ոչ պաշտոնական) իշխանություն և քարիզմատիկ հեղինակություն՝ վեր և՛ սենատից, և՛ աշխարհաժողովից, և՛ հանրապետական պաշտոնեությունից: Նպատակին հետամուտ նրանք որոշեցին օգտագործել հանրապետական սահմանադրությունը: Համադրելով իրենց ուժն ու ազդեցությունը՝ նրանք Ք.ա. 59 թ. Կեսարին ընտրեցին կոնսուլ: Մյուս (սենատական) կոնսուլին՝ Գն. Բիբուլոսին, ստիպեցին լռել, ավելին՝ արգելեցին լքել տունը և կատարել իր պաշտոնական պարտականությունները[21]: Կեսարը կառավարեց միանձնյա՝ ի կատար ածելով երեքի նպատակները: Կոնսուլությունից հետո

---

[20] А.Б. Егоров, Рим на грани эпох, Ленинград, 1985, с.96

[21] Սրամիտ հռոմեացիները, որոնք, ըստ ավանդույթի, տարին կոչում էին երկու կոնսուլների անունով, «Կեսարի և Բիբուլոսի» կոնսուլության փոխարեն ասում էին «Հուլիոսի և Կեսարի» կոնսուլություն, Suet., Div. Jul., XX, 2

իբրև կուսակալ (պրոկոնսուլ) նա հինգ տարով մեկնեց Գալիա՝ ստանալով բանակ հավաքագրելու, պատերազմներ վարելու և պայմանագրեր կնքելու արտակարգ լիազորություններ:

Կարծես երեքի դաշնությունը լուծել էր իր անմիջական խնդիրը, և անդամներից յուրաքանչյուրը մյուսների հանդեպ պահպանում էր սոսկ ձևական ամիկալ հարաբերություններ: Դրա նախապայմանը, ինչպես նշել ենք, փոխադարձ լոյալությունն էր: Սակայն այդօրինակ հարաբերությունները շուտով ճեղքվածքներ տվեցին. երեքն էլ ձգտում էին մենիշխանության և միջոցների առաջ կանգ չէին առնում: Այդուհանդերձ, զգալով բացահայտ առճակատման վաղաժամությունն ու վտանգավորությունը, նրանք ընկրկեցին: Որոշեցին թարմացնել դաշնությունը (societas restituta): Դա տեղի ունեցավ Ք.ա. 56 թ. Հյուսիսային Իտալիայի Լուկա քաղաքում՝ ավելի քան երկու հարյուր սենատորի ներկայությամբ[22]: Չնայած դրան, դաշնությունը կրկին ոչ պաշտոնական էր: Ոչ սենատը, ոչ էլ աշխարհաժողովը նրանց չօրինադրեց:

Ինչ վերաբերում է դաշնության պայմաններին, ապա դրանք էական փոփոխության ենթարկվեցին: Ի լրումն նախորդ պայմանների՝ այժմ կարևորվում էր (հարկավ, լռելյայն) մի էական հանգամանք, որը ենթադրում էր մասնակիցների իրական կարգավիճակների համահավասարեցում: Բանն այն էր, որ Կեսարն արդեն հասցրել էր գրավել Գալիայի մեծ մասը և վերահսկում էր նրա մարդկային և նյութական ռեսուրսները: Նման դիրքի էին ձգտում թե՛ Պոմպեոսը, թե՛, մանավանդ, Կրասոսը: Եվ որոշվեց, որ նրանք Ք. ա. 55 թ. կընտրվեն կոնսուլ, կպաշտպանեն երեքի շահերը: Մեկամյա պաշտոնավարումից հետո, նրանք հինգ տարով պետք է ստանային ... նահանգներ. Պոմպեոսը՝ Իսպանիան, իսկ Կրասոսը՝ Ասորիքը՝ կրկին բանակ հավաքագրելու, պատերազմներ վարելու, պայմանագրեր կնքելու արտակարգ լիազորություններով: Նույն հիմունքներով երկարաձգվելու էին նաև Կեսարի լիազորությունները Գալիայում: Ընդսմին կողմերից յուրաքանչյուրը գործելու էր ըստ իր հայեցողության և պատասխանատվության:

Ք.ա. 55 թ. Պոմպեոսը և Կրասոսը համատեղ պաշտոնավարեցին: Եվ էական որևէ քայլ չձեռնարկեցին. լարված, սպասողական դրություն էր: Պաշտոնավարումից անմիջապես հետո Կրասոսը հեռացավ Արևելք՝ հակապարթևական մեծ արշավանք ձեռնարկելու համար: Երազում էր կրկնել Ալ. Մակեդոնա-

---

[22] Թեպետ Լուկայի հանդիպումը ոչ պաշտոնական էր, բայց մեծ իրարանցում առաջ բերեց և Հռոմի փաստացի տիրակալներին իրենց «հարգանաց հավաստիքը» բերելու համար այսեղ էին ժամանել շուրջ երկու հարյուր հիսուն սենատոր և բազում քաղաքացիներ: Տես մանրամասն՝ Plut., Pomp., LI; Crass., XIV; App., Bel. Civ., II,17; Suet. Div. Jul., 24

ցու սխրանքը և մարտերով հասնել մինչև Հնդկաստան: Պոմպեոսը մնաց Հռոմում՝ իր գործակալների (լեգատներ) միջոցով կառավարելով Իսպանիան:

Կրասոսի արշավանքն ավարտվեց աղետով: Ք.ա. 53 թ. Հյուսիսային Միջագետքի տափաստաններում՝ Խառան քաղաքի մատույցներում, նրա բանակը շրջապատվեց ու կոտորվեց: Ընկավ և ինքը՝ Կրասոսը: Եվ ինչպես պետք էր սպասել, աղետը որևէ ձևով չխաթարեց ո՛չ Պոմպեոսի, ո՛չ էլ Կեսարի դիրքերը: Բոլորը համոզված էին, որ դաշնությունը չի ենթադրում երեքի համատեղ ռազմական ձեռնարկումներ: Մեղավոր ճանաչվեց հայոց արքա Արտավազդ Բ-ն[23]:

Այս դեպքերից հետո, Կեսարը և Պոմպեոսը դաշնությունը պահպանելու համար պետք է թարմացնեին այն՝ նոր համաձայնությամբ հստակեցնելով վերջինիս խնդիրները ներկա իրավիճակում: Սակայն դա տեղի չունեցավ: Եվ Կրասոսի մահվանից հետո դաշնությունը փաստորեն փլուզվեց:

Նախկին դաշնակիցներն արտաքուստ պահպանում էին լոյալ-ամիկալ հարաբերություններ, մինչդեռ Հռոմում օրօրի ահագնանում էր քաոսը. պարենի մատակարարման խաթարում, գների աներևակայելի աճ, գողություն, հանցախմբերի արյունոտ ընդհարումներ, պետական ապարատի կաթվածահար վիճակ: Պոմպեոսը և Կեսարը, անկասկած, ի զորու էին համատեղ ջանքերով հաղթահարել ճգնաժամը, բայց նրանք որևէ քայլի չդիմեցին: Գործում էին «որքան վատ, այնքան լավ» տրամաբանությամբ: Նրանց (և էլի շատերին) ձեռնտու էր սենատական Հանրապետության փլուզումը[24]:

Ի վերջո սենատը ցուցաբերեց վճռականություն՝ Պոմպեոսին առաջարկելով արտակարգ իշխանություն: Ք.ա. 52 թ. առաջին անգամ Հռոմի պատմության մեջ ընտրվեց կոնսուլ առանց կառավարչակցի (consul sine collega)[25]: Եվ Պոմպեոսն իրեն ներհատուկ եռանդով և կազմակերչական տաղանդով կարճ ժամանակահատվածում վերականգնեց Հռոմի բնականոն կյանքը: Սպասվում էր, որ այս իրավիճակը կօրինադրվի՝ առաջ բերելով համապատասխան փոփոխություններ հռոմեական պետական կարգի և ընդհանրապես իրավագիտակցության մեջ: Հիրավի, դեպքերի այսօրինակ զարգացման դեպքում

---

[23] Այս մասին մանրամասն տես՝ А.А. Степанян, К государственной политике царя Артавазда II, Историко—филологический журнал, 1989,2, с.42—43

[24] R.Syme, op. cit., p. 214

[25] Հռոմի պատմության մեջ իր նախադեպը չունեցող այս պաշտոնավարումը խստիվ հակասում էր երկրի սահմանադրության կարևորագույն սկզբունքներից մեկին՝ բոլոր պաշտոնները պարտադիր կոլեգիալ էին: Այսու, Պոմպեոսը՝ Հռոմի փաստացի տիրակալը, ստեղծեց «հանրապետական միապետության» նախադեպ, M. Gelzer, Pompeius, München, 1948, S. 19

միանգամայն հնարավոր էր, որ ոչ պաշտոնական դաշինքից ծնունդ առներ «հանրապետական միապետություն»:

Սակայն սենատական վերնախավը չգնաց այս քայլին՝ նախընտրելով սպասողական դիրքը: Լինելով անմիաբան և ծայրաստիճան եսակենտրոն՝ նա չզգաց պահի ողջ կարևորությունը: Մեկամյա պաշտոնավարությունից հետո Պոմպեոսը վայր դրեց իր լիազորությունները:

Պատմությունը գնաց այլ ճանապարհով: Առաջիկա երկու տարիներին հույժ լարվեցին սենատի և Կեսարի հարաբերությունները: Թերևս, Պոմպեոսն անմասն չէր այս գործընթացից: Ք.ա. 49 թ. սկվեց քաղաքացիական պատերազմ. Հռոմը գրավվեց Կեսարի գալլական լեգեոնների կողմից, զոհվեց Պոմպեոսը: Կեսարը հռչակվեց «հավերժական դիկտատոր», սակայն զոհ գնաց իր իսկ ստեղծած համակարգին:

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Ք.ա. 50-ական թթ. մշակված «հանրապետական միապետության» գաղափարը հույժ արդյունական էր Հռոմի համար: Այդ ճանապարհով գնաց Օկտավիանոսը: Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ երեք խոշոր այրերի Ք.ա. 60 թ. կնքած դաշնությունը մի միջավայր էր, որտեղ ձևավորվեցին և փորձարկվեցին Հռոմի համար կենսական պետական-ընկերային կյանքի մի քանի հարացույցներ: Պատմությանն էր թողնվում դրանցից որևէ մեկին նախապատվություն տալու իրավունքը: